ՓՈՂԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ.

մեծ խնդիր բիզնեսի սկզբում



Kingdom of the Netherlands

«Ֆինանսների փնտրտուքով ուր և ում ասես, որ չեմ դիմել: Օրինակ, Եվրոպայում անտոկոս վարկ է տալիս պետությունը, նորաստեղծ բիզնեսներին պետական աջակցություն կա: Մեր պետությունում չկա: Ես ոչ մի աջակցություն չեմ գտել: Հայաստանում մենք ուզում ենք տնտեսություն զարգացնել, բայց հարկատուին միայն խեղդում ենք, ոչնչացնում ենք, ուրիշ ոչ մի բան չենք տալիս»:

Նաիրա Պողոսյան
բանակցային հմտությունների վարպետության ծառայության հիմնադիր



Բանակցային հմտությունների վարպետության (coaching) ծառայություններից օգտվում են թե՛ բանակցային հմտություններ ձեռք բերել ցանկացողները, թե՛ բիզնեսում կամ անձնական տարբեր հարցերի լուծումներ փնտրողները:

Ֆինանսավորում ներգրավելու հիմնական ձևերը



Նաիրան մասնակցել է մի ծրագրի, որի շրջանակում ցածր տոկոսադրույքով վարկ վերցնելու հնարավորություն է ունեցել.
«Բայց անշարժ գույքի գրավադրում էր ուզում, իսկ իմ ընտանիքն ինձ այդ հարցով չէր օգնի»:

Նաիրային հաջողվել է համոզել մտերիմ ընկերներից մեկին ֆինանսավորել իր գաղափարը և սկսել բիզնեսը:



Դրամաշնորհներ

Կին սկսնակ ձեռներեցներին մինչև 2 միլիոն դրամ դրամաշնորհներ՝ ֆինանսական անհատույց դրամական աջակցություն է տրամադրում Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ)՝ «Կին ձեռներեցներ» ծրագրով:

Ծրագրի մասնակիցները նախ դասընթացների են մասնակցում, կազմում են իրենց բիզնես պլանը՝ աշխատելով տարբեր մասնագետների, այդ թվում բիզնես խորհրդատուի հետ:

Հաջորդ փուլում դիմում են առավելագույնը 2 մլն դրամի դրամաշնորհի ստանալու համար:

Տաթևիկ Մանուկյան

ՀԲԸՄ «Կին ձեռներեցներ» ծրագրի ղեկավար

Պետության արձագանքը

«Էկոնոմիկայի նախարարության ծրագրերը լայն ընդգրկում ունեն և չեն թիրախավորում առանձին խմբեր և պետական քաղաքականությունը ուղղված է ձեռներեցության և բիզնեսի զարգացման համընդհանուր աջակցության ապահովմանը՝ առանց տարիքային կամ սոցիալական խմբերի սահմանափակման: Կանանց ձեռներեցության խթանումն դիտարկվում է գործող պետական և միջազգային ծրագրերի համատեքստում»:

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն


Φπή